

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Կիրակի օրը եկեղեցի երթա՞մ, թէ տունս՝

իմ սենեակս աղօթեմ. այդ մէկը

բաւարա՞ր է ինձի համար

Վարդան Վարդապետ Այգեկցի կ'ըսէ. «Քու սենեակդ մտի՛ր եւ փակե՛ քու դռններդ, եւ գաղտուկ աղօթք ըրե՛ քու Հօրդ» (Մատթէոս 6.6): Այստեղ մարմինը եւ սիրտը սենեակ կը կոչէ եւ կը պատուիրէ մարմնական ամէն խորհուրդ՝ աղօթքի ժամանակ մտքէն հեռացնել:

Քրիստոնեայ ժողովուրդէն մէկը, երբ լսէ եկեղեցւոյ զանգին ձայնը՝ գիշեր թէ ցերեկ ատեն, մանաւանդ Կիրակի օրը, որ տէրունական օր է, եւ եկեղեցւոյ՝ երկինքի արքայութեան դուռը չ'երթար, քահանան չի տեսներ, ու չի լսեր Աստուծոյ պատւիրաններուն հրամանը՝ պիտի չտեսնէ փառաց Տէրը բազմած՝ քառակերպ կենդանիներուն վրայ: Ուստի, ան որ Կիրակի օրը չի տեսներ եկեղեցականը եւ չի խոստովանիր իր յանցանքները, Աստուծոյ փրկութիւնը պիտի չունենայ:

Վարդան Վրդ. Այգեկցի

ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Երկնաւոր թագաւոր, տո՛ւր ինձի Քու արքայութիւնդ՝ զոր Քեզ սիրողներուն խոստացար եւ զօրացո՛ւր իմ սիրտս՝ որպէսզի մեղքը ատեն եւ միայն Քե՛զ սիրեմ եւ Քո՛ւ կամփռ կատարեմ եւ ողորմե՛ Քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:

ԵՐԵ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

Երբ Աստուծոյ պաշտպանութիւնը կը փնտռես, կարդա՛ Սաղմոս 5

Ո՛վ Տէ՛ր, լսէ ինչ որ կ'ըսեմ, նկատի՛ առ հեծեծամբներս: Մտի՛կ ըրէ աղօթքս, ո՛վ իմ թագաւորս եւ Աստուածս, կ'աղաչեմ՝ քեզի: Ո՛վ Տէ՛ր, առտու կանուխէն լսե՛ կանչս եւ սպասեմ պատասխանիդ: Դուն անօրէնութիւն չես սիրեր, ո՛վ Աստուած դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ, հպարտները չես հանդուրժեր եւ կ'ատես անօրէնութիւն գործողները սուտ խօսողները կորուստի կը մատնես, արիւնահեղ ու նենգաւոր մարդէն կը զգուխս, ով Տէր: Բայց ես քու անչափ սիրոյդ ապաւինած՝ քու տունդ պիտի մտնեմ, երկիւղածութեամբ դէպի սուրբ տաճարդ պիտի դառնամ ու երկրպագեմ:

Տէ՛ր, արդարութեամբդ առաջնորդէ զիս, քու նամբադ հարթե՛ իմ դիմացս, որպէսզի դարձանուտ թշնամիներս տեսնեն. որովհետեւ անոնց բերանը ստութեամբ լի է, եւ անոնց սիրտը՝ չարութեամբ լցուց: Բացուած գերեզման է կոկորդն անոնց եւ նենգութեան գործիք դարձեր են լեզուներն անոնց:

Ո՛վ Աստուած, անոնց յանցանքին պատիժը տուր, իրենց խորհուրդները թող կործանեն զիրենք: Մերժե՛ զիրենք իրենց ամբարիշտութիւններուն համար, որովհետեւ քեզի դէմ ըմբոստացան:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԶՈՒ ԽՕՍԲԴ ԽՍ ՂՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

ԹԻՒ 51

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Եւ. 40.18-31 Երբ. 4.16-5.10:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 18.9-14

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 18.9-14

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար զացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, ու միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզի՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շարաքը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի,- եզրակացուց Յիսուս,- ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն, որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

«Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Այս բառերը արտասանելով մաքսաւորը արդար գնաց իր տունը: Մենք եւս սիրելի ընթերցող մեր միակ խնդրանքը, որ պէտք է բարձրացնենք առ Աստուած՝ մեր մեղքերուն ներում եւ անձերու փրկութիւնն է: Աստուած ամէն ինչ տուած է մեզի եւ միշտ կը հոգայ մեր պէտքերը: Ապրինք քրիստոնէական կեանքը առանց հպարտանալու՝ խոնարհութեամբ եւ խոհեմութեամբ, այն ատեն Աստուած ինք պիտի բարձրացնէ մեզի:

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎ ՄԱՎԿԱՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
40.18-31**

Որո՞ւ կը նմանցնէք զԱստուած կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէք:

Կուռքի՞: Բայց ձուկագործն է, որ կուռքը կը ձուլէ, ու ոսկերիչը զայն ոսկիով կը պատէ եւ արծաթէ շղթաներ կը շինէ անոր համար:

Նմանապէս հիւսը անփուտ ծառի կոճղ մը կ'առնէ եւ իր ճարտարութեամբ կ'աշխատի անկէ անշարժ կուռք մը շինելու:

Այնքան տգէտ էք, չլսեցի՞ք կամ ձեզի չպատմուեցա՞ն երբեք Աստուծոյ մասին, որ երկրին հիմերը դրաւ:

Աստուծոյ մասին, որ կը նստի երկրագունդէն այնքան վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու չափ կ'երեւին իրեն: Ան է, որ երկինքը վարագոյրի պէս կը տարածէ եւ զայն վրանի պէս կը կանգնէ իրեն համար:

Ինքն է, որ իշխանները կը բնաջնջէ եւ երկրի դատաւորները կ'ոչնչացնէ:

Բոյսի մը պէս անոնք հազիւ տնկուած կամ ցանուած, եւ տակաւին հողին մէջ չարմատացած կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը զանոնք կը տանի յարդի պէս:

Արդ, «Որո՞ւ կը նմանցնէք զիս, ո՞վ կը հաւասարի ինձի», կ'ըսէ Սուրբը, Աստուած:

Երկինք բարձրացուցէ՞ք ձեր աչքերը եւ դիտեցէ՞ք: Ո՞վ ստեղծեց այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք իրենց անուններով կը կանչէ: Այնքան մեծ է իր իշխանութիւնը եւ սաստիկ՝ իր զօրութիւնը, որ անոնցմէ ոեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն:



4.16-5.10

Այսուհետեւ համարակօրէն մօտեցանք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհիք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:


Արդարեւ, ամէն ֆահանայապետ, որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ գոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, ֆանի ինքն եւս նոյն տկարութիւնները ունի: Անոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է գոհ մատուցանէ:

Գիտէ՞ք նաեւ, թէ ոեւէ մէկը չի կրնար ինքն իրեն ֆահանայապետութեան պատիւը առնել, այլ՝ Աստուած է, որ զայն այդ պաշտօնին կը կանչէ, նիշդ ինչպէս Ա.հարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ ֆահանայապետութեան պատիւը, այլ՝ զայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. «*Դուն իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ*», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «*Դուն յաշտեան ֆահանայ ես, Մեկիսեցիի ֆահանային պէս*»:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահէն փրկել:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**Ս. ՅԱԿՈՒԲ ՄԾԲՆԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏ**



ԵՄԻՍԿՎՈՅ

Սուրբ Ստեփանոս նախավկան առաջին դարուն ապրած քրիստոնեայ է՝ առաջին նահատակը, որ իր արիւնը թափեց Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Որդի դաւանելու համար: Յիսուսի 72 աշակերտներէն մէկն է ան, որ վեց ընկերներուն հետ Պետրոս առաքեալ առաջին սուրբ սեղանին սպասաւոր կարգեց: Ս. Ստեփանոսի մասին Ս. Գիրքը կ'ըսէ, որ ան աստուածային «շնորհիքով ու զօրութեամբ» լեցուած էր, «... ժողովուրդին մէջ զարմանալի գործեր եւ մեծ հրաշքներ կը գործէր» (Գրծ. 6.8): Ան Սուրբ Հոգիին զօրութեամբ լեցուած կը ֆարձէր Յիսուս Քրիստոսը, որուն հետեւանով արտասահմանէն եկած հրեաները, Երուսաղէմացի ժողովուրդը, ֆահանայապետներն ու օրէնագետները գրգռեցին սուրբին դէմ, որոնք զայն բարձրագոյն ատենին յանձնեցին:

«Եւ սուտ վկաներ բերին, որոնք կ'ըսէին՝ այս մարդը անդադար կը հայեոյէ սուրբ տեղին ու օրէնքին դէմ: «...Եւ բոլոր անոնք, որոնք նստած էին ատենին մէջ, անոր նայելով տեսան, որ անոր դէմքը հրեշտակի կը նմանէր» (Գրծ. 6.13-15):

Պատասխանելով իրեն ուղղուած այս զրպարտութեան, Ստեփանոս նախավկան ատենին մէջ սկսաւ Սուրբ Հոգիով մեկնել Հին Կտակարանը ըսելով, թէ հին մարգարէներ վկայած են Արդարին, Մեսիային՝ Յիսուս Քրիստոսի գալուստին մասին: Ու եզրափակելով իր խօսքը՝ կ'ըսէ. «Ձեր հայրերը մարգարէներէն ո՞ր մէկը չհալածեցին: Անոնք սպաննեցին բոլոր անոնց, որոնք սկիզբէն իսկ պատմեցին Արդարին գալուստին մասին, գոր մատնողն ու սպաննողը դուք եղաք, դուք՝ որ հրեշտակներու հրամանով օրէնքը ստացաք, սակայն զայն չգործադրեցիք» (Գրծ. 7.52-53):

Ստեփանոս Նախավկան ֆարկոծած ու սպաննած են Երուսաղէմի շրջակայքը, մինչ նոյն պահուն ան ըսած է. «Ահա կը տեսնեմ երկինքը բացուած եւ մարդու Որդին Աստուծոյ աջ կողմը կանգնած» (Գրծ. 7.55):

Ս. Ստեփանոս առաջին նահատակն է, որուն արեան հեղուկով ճամբան կը բացուի հետագայ դարերու բոլոր վկաններուն ու մարտիրոսներուն:

Հայ եկեղեցին Ս. Ստեփանոսի յիշատակը կը տօնէ մեծ տօներու հետ՝ Դեկտեմբեր 25-ին կամ անոր յաջորդող օրը (Եթէ 25 Դեկտեմբերը Կիրակի կամ պահոց օր հանդիպի):